Մոնո սակագնային փաթեթի պայմաններ

1. Սույն պայմաններով «Մոնո» սակագնային փաթեթներում միայն նոր բաժանորդագրության դեպքում ներառել.

- Wi-Fi Սարքի (ակտիվացված Wi-Fi ծառայությամբ) օգտագործման իրավունք (Wi-Fi Սարքը (ակտիվացված Wi-Fi ծառայությամբ) ներառվում է սակագնային փաթեթում)՝ առանց տարեկան բաժանորդագրության անհրաժեշտության: Բաժանորդը կարող է հրաժարվել սույն կետում սահմանված պայմանից:

2. Եթե Բաժանորդը բաժանորդագրվել է Ակտիվ վաճառքի, Գործակալների, Հեռախոսազանգերի /Տելեսեյլինգի/ միջոցով «Մոնո» սակագնային փաթեթներում՝ մեկ տարով և Բաժանորդային պայմանագրի գործողությունը դադարեցվում է Բաժանորդի գործողությամբ՝ հիմնական ծառայությունների ակտիվացման պահից սկսած 1 (մեկ) ամսվա ընթացքում, ապա՝

- Բաժանորդը չի պարտավորվում վճարել տուգանք 15 000 (տասնհինգ հազար) ՀՀ դրամի չափով, Բաժանորդը պարտավորվում է Օպերատորին ամբողջությամբ վճարել ընթացիկ պարտքը:

3. Սույն պայմաններով՝ հիմնական ծառայությունների ակտիվացման պահից սկսած 1 (մեկ) ամիս անց, եթե Բաժանորդային պայմանագրի գործողությունը դադարեցվում է՝ Բաժանորդի գործողությամբ կամ անգործությամբ պայմանավորված, մինչև «Մոնո» սակագնային փաթեթների պայմաններով սահմանված պարտադիր ժամկետի ավարտը, ապա Բաժանորդը պարտավորվում է Օպերատորին ամբողջությամբ վճարել ընթացիկ պարտքը և տուգանք 15 000 (տասնհինգ հազար) ՀՀ դրամի չափով: